

ըսեն թոյլ տուաւ որ 1842-ին Փարիզ մեկնի:

Փաստէօն անսահմանօրէն ուրախ էր. առաջին օրէն իսկ հետեւեալ կերպով կը դասաւորէր իր կեանքը. «Մի՛ մտահոգուիք առողջութեամբս ու աշխատութեամբս, կը գրէր ծնողացը, ժամը վեցին քառորդ մնացած անկողինէս կ'ելլեմ, որով կը տեսնէք որ շատ ալ կանուխ է: Ուրբաթ օրերը Շարբուրի հետ (ամենասիրելի ընկերը) մերձակայ դարադարանը պիտի անցընենք. իսկ կիրակի օրերը՝ միասին պիտի պտտինք ու աշխատինք: Շարբուրի հետ, կիրակի եւ գուցէ հինգշաբթի, իմաստասիրութիւն պիտի սորվինք. ապա՝ քանի մը գրական երկեր պիտի կարդամ: Ուստի՝ կը տեսնէք որ այս տարի գերծեմ հայրենաբաղձութեան ախտէն»:

Գիտութեան ու գեղեցիկութեան այդ ստանին մէջ, Փաստէօն ընդգրկած ուղին, ահա վերոյիշեալ յայտարարին մէջ ամփոփուած կը գտնենք:

Գիտութիւն, լոյս ու յառաջդիմութիւն, ասոնք էին զինքը հրապուրող տեսիլքները, մնացեալը՝ խաւար ու խորթութիւն էր Փաստէօնի համար: Ոչ մէկ ատեն ան պիտի չեղէր ուղիղ ճամբէն: Փաստէօն երբեք չվախցաւ միջավայրի վատասերիչ ազդակներէն ու ազդեցութենէն, ըստ իր համոզումին՝ «Երբ մարդս քիչ մը արիւն ունի եղունգներուն տակ, Փարիզի մէջ կարելի է ապրիլ պարզունակ ու հանդարտ սրտով, ինչպէս ուրիշ որ եւ է տեղ: Կը փոխուի անիկա՝ որ կամք չունի»:

Փաստէօն հետեւելով հանդերձ Սէն - Լուիի դասընթացներուն, պարապոյ ժամերուն Սոսպոնի դուռը ափ կ'առնէր, հիացումով ունկնդրելու համար հռչակաւոր պրոֆ. Տիւմայի բնագիտութեան դասախօսութիւններուն, որոնց ներկայ կը գտնուէր երիտասարդներու հոծ բազմութիւն մը: Փաստէօն կը բնակէր պր. Պաուլիէի կրթական հաստատութեան մէջ, ու-

րուն ա'յնքան օգտակար կը հանդիսանար որ տնօրէնը կը հրաժարէր իրմէ նիւթական որեւէ հաստուցում պահանջելէ: Չափազանց խնայասէր էր, այն աստիճանի՝ որ հօրը կողմէ յաճախ կը պախարակուէր: Վերջապէս 1843-ի վերջաւորութեանը, Փաստէօն կը յաջողէր Էֆոլ-Նորմալ մըտնել:

Պարոն Պաուլիէի հաստատութենէն բաժանումը, երբեք պատճառ չհանդիսացաւ, որ ան մոռնար բարի եւ ազնիւ դաստիարակն ու հոգածուն: Իր պարապոյ ժամերուն սիրայօժար յանձն կ'առնէր բնագիտութեան դասեր աւանդելու: Պարոն Պաուլիէ չափազանց ազդուելով Փաստէօնի երախտագիտական այս արտայայտութենէն, սիրով կ'ընդունէր այս առաջարկը, ըսելով՝ «Լաւագոյն միջոցը կ'ընծայէք ինձ, ձեզ հետ մտերմական յարաբերութիւններ մշակելու, որոնցմէ պիտի օգտուինք երկուստեք»:

Փաստէօնի հայրն ալ իր կարգին, չափազանց ուրախանալով այս կարգադրութենէն, կը գրէր իր զաւակին. «Ուրախ եմ տեսնելով, որ պարոն Պաուլիէի դպրոցին մէջ դասեր կ'աւանդես: Մեզի հանդէպ այնքան բարի վերաբերմունք մը ունեցաւ, որ սրտանց կը ցանկայի ի վիճակի տեսնել ձեզ, հաստուցանելու համար երախտագիտութիւնը: Միշտ չափազանց հաճոյակատար եղիր իրեն հանդէպ, որովհետեւ ոչ միայն անձնապէս քեզի համար կը պարտիս այդպիսի վերաբերմունք մը, այլ նաեւ՝ ուրիշներու համար: Զինքը քաջալերած պիտի ըլլաս, ուրիշ աշխատասէր երիտասարդներու հետ ալ վերաբերուելու քեզի հետ ըրածին պէս, որոնց ապագան՝ թեւեւ առանց իրեն՝ վտանգուած պիտի ըլլայ»:

Ազնուութեան ու բարութեան դոյզ մարգերուն մէջ, կարծես հայր եւ որդի մրցումի ելած էին, մէկը միւսը կը ջանար գերազանցել, երկուստեք սքանչելի ներ-

դաշնակութիւն մը ստեղծելով:

Ո՛րքան անսահման պէտք է ըլլայ հօր մը սերմանկութիւնը, երբ ան տեսականօրէն ստիպուած կը դառնայ յանձնարարելու իր զաւակին, որ քիչ մը նուազ աշխատի ու քիչ մը աւելի դուրսանայ: Հօր եւ զաւակի միջեւ տեղի ունեցող թղթակցութիւնները, անսահման սիրոյ եւ փոխադարձ յարգանքի յորդառատ աղբիւրի մը կը վերածուէին, ուրկէ՝ երջանկութիւնն էր որ կը հոսէր:

Ահա հոգեպարար այդ մթնոլորտին մէջ էր որ կ'ապրէր Փաստէօն՝ Էֆոլ-Նորմալի իր կեանքը: Ան չըջանաւորուէր այդ հաստատութենէն 1847-ին, տարրագիտութեան տղթէօնի տիտղոսին արժանանալով: Փաստէօն պսակաւոր ելլելէ ետքն ալ լարուած ճիւղերով կը շարունակէր իր ուսումը նոյն հաստատութեան տարրալուծարանին մէջ: Գիտութեանց կաճառին ներկայացուցած իր լուրջ ուսումնասիրութիւններով կը սկսէր գրաւել մեծահամբաւ գիտնականներու ուշադրութիւնը:

Այդ օրերուն, գիտնականներուն տրամադրուած տարրալուծարաններն ու գործիքները, նախնական արդահատելի վիճակ մը ունէին: Գիտութեան եւ լոյսի հնոցներ ըլլալէ աւելի՝ մութ, խոնաւ ու կեղտոտ խցիկներ էին, ուրկէ ներս մտնողը՝ գրեթէ իր մահկանացուն կը կնքէր: Հակառակ այս աննպաստ պայմաններուն, Փաստէօն չափազանց երջանիկ կը զգար ինքզինքը: Դժբախտաբար երկար չտեսնեց այդ անհրապոյր երջանկութիւնն իսկ. նախարարական պաշտօնագիր մը զինքը Տիւմայի վարժարանին բնագիտութեան ուսուցիչ կ'անուանէր: Փաստէօն սրտաբեկ կը մեկնէր, բայց իր ուսուցիչներէն՝ Պիոյ, Պանէր, բայց իր ուսուցիչներէն, մօէն ճիւղ կը թափէին զինքը կրկին Փարիզ բերել տալու համար:

Ժամանակ մը ետքը, 1847-ին, Սթրազպուրկի համալսարանին բնագիտութեան

ուսուցիչը կ'անուանուէր, ուր կ'ամուսնանար համալսարանին տնօրէնին աղջկանը հետ: Ինչպէս որ ըսինք, Փաստէօն իր նախկին դաստիարակներէն չափազանց սիրուած ու դնահատուած էր, ասոնց մէջէն՝ մասնաւորապէս Պրոֆ. Պիոն իրմով չափազանց կը շահագրգռուէր: Ան՝ տարիներու բեռան տակ կըած, վերջին առտիճանի յարգուած, հմուտ եւ անաչառ գիտնական մըն էր, որուն խօսքը մեծ արժէք կը ներկայացնէր: Այս պայմաններուն մէջ, երբ մէկը բախտը կ'ունենար Պիոյի բարեկամութեան եւ դնահատանքին արժանանալու, արդէն յաջողութեան դրաւական մը կարելի էր նկատել: Ահա այս մեծ մարդը բազմաթիւ առիթներով իր հիացումը յայտնած էր Փաստէօնի: Ան իր նամակներէն մէկուն մէջ այսպէս կ'արտայայտուէր. «Իմ տարիքիս, մարդս կ'ապրի պարզապէս այն շահագրգռութեամբ որ կը տածէ իր սիրած անձերուն հանդէպ: Դուք այն սակաւաթիւներէն էք, որ կարող էք տալ մտքիս այդ սերունդը»: Պիոյ, հակառակ իր թափած ճիւղերուն, երբ կը տեսնէ որ անհնար էր Փաստէօնը փոխադրել, դառնացած՝ հետեւեալ տողերը կը գրէր իր պաշտպանակին. «Գալով այն բոլոր միջադէպներուն, որոնք յառաջ կու գան կամ կախում ունին մարդկային քմահաճոյքէն, տակաւին ժամանակի մը համար եւս արհամարհեցէք: Երբեք մի՛ յուսալքուիք եւ անկուն հետապնդեցէք ձեր մեծ ասպարէզը: Վարձատրութիւնը մօտ է, եւ այնքան վստահ ու նուազ առարկելի, որքան անոր արժանացած պիտի ըլլաք աւելի փայլուն տիտղոսներով: Հեռու է այն օրը, երբ անոնք որ կարող են ձեզի դրականօրէն օգտակար հանդիսանալու, հաճոյքը պիտի ունենան զայն կատարելու, իսկ զանցառուները՝ չփոթանքով ու ամօթով պիտի համակուին»:

Գիտական որոշ հետազոտութիւններ

գիտնական մը: Պարոններ, անձամբ առի-
թը ունեցաք քանիցս զնահատելու, թէ
ինչպիսի՛ պայծառ, կորովալից ու բեղուն
մտքի տէր է Փաստէօն: Երբ Փաստէօնի
տարիներէ ի վեր փայփայած երազը կ'ի-
րականանար, իրեն իբրեւ աշխատանոց կը
տրուէր Էֆոլ Նորմալի շէնքին վերնաշարիւր
գտնուող անպէտ, մութ ու խոնաւ քանի
մը խցիկները, ուրկէ պիտի ճառագայթէին
մարդկային մտքի ամենամեծ նուաճում-
ներն ու բարիքները: Իրբեւ «Էֆոլ» կը ծա-
ռայէր խեղճուկ կառուցուածքով դործիք
մը, որ յարմար տեղի մը չգոյութեան
պատճառով զետեղուած էր սանդուղնե-
րուն ներքեւը, ու Փաստէօն ստիպուած էր
ինքն իր վրայ կէլի դայն կարենալ օդտա-
դործելու համար:

Փաստէօն, գիտական ու առողջապա-
հական բոլոր այս անյարմարութիւնները
արհամարհելով, տարիներ շարունակ իր
միտքն ու առողջութիւնը դոհարեց, տարբա-
րալոծարանէ աւելի ակոսի նմանող
խցիկներուն մէջ, պարզապէս գիտութեան
եւ ճշմարտութեան սէրէն խանդավառ-
ուած: Իբր օգնական՝ սպասաւոր մը իսկ
չունէր, բայց, ինչպէս որ ըսինք, աշխա-
տելու եւ յաջողելու իր մարմնին առջեւ
ամէն արգելք կ'անհետէր:

Ահա այս մարդն էր որ Էֆոլ-Նորմալ
կ'ընդունուէր ո՛չ իբր դասախօս՝ այլ վար-
ժարանի մատակարարի եւ առողջապահա-
կան տնօրէնի նուաստացուցիչ պաշտօնով,
զոր ամենայն խղճատութեամբ երկար ա-
տեն վարեց:

Իր պաշտօնին համընթաց սկսաւ առաջ
տանիլ ալքոլի եւ քացախի կաղմութեան
մասին ձեռնարկած ուսումնասիրութիւնը:
Այս մասին իր գրած երկը Գիտութեանց
կաճառին կողմէ մեծապէս կը զնահատ-
ուէր, ու մեծահամբաւ Քլոտ Պեռնարի կը
յանձնուէր խմբումներու մասին Փաս-
տէօնի յայտնած տեսակէտներուն պար-
զաբանութիւնն ու ստուգաբանութիւնը,

եւ Փաստէօնի կը յատկացուէր 1859 տար-
ուան բնագիտութեան նուիրուած պար-
գելը:

Փաստէօն բուն յուզումով հետեւեալ
իղճը կ'արտայայտէր. «Թող Տէրը կամե-
նայ, որ շնորհիւ յարատեւ աշխատու-
թեանս, ի վիճակի ըլլամ պղտիկ քար մը
զետեղելու մեր ծանօթութեանց խարխուլ
եւ անկայուն շէնքին վրայ, լուսաբանելով
կենաց ու մահուան միջին այն խորհուրդ-
ները, ուր մեր իմացականութիւնը անցեա-
լին մէջ խղճալիօրէն ձախողած է»:

Կասկածէ դուրս է, որ Փաստէօնի այդ
մեծ իղճը իրականացաւ, եւ իրեն վիճակ-
ուեցաւ հիմը դնելու գիտական անառար-
կելի այն ճշմարտութիւններուն, որոնց
վրայ կառուցուեցաւ եւ պիտի չարունա-
կէր զեղադարձուիլ Փաստէօնի երազած
մեծ շէնքը:

Փաստէօնի առջեւ յաղթանակի մեծ
դոները լայնօրէն բացուած էին, այլեւս
յաջորդաբար դալինեպսակներ պիտի դա-
յին իր ճակատը պճնելու: Ափսո՜ս որ Պիոյ
գոհունակութիւնը չունեցաւ, իր ողջու-
թեանը, Փաստէօնի փառքի օրերուն ակա-
նատես ըլլալու: Փաստէօն, երկրորդ ան-
գամ ըլլալով, 1862-ին, Գիտութեանց կա-
ճառին անգամակցութեան թեկնածութիւ-
նը կը դնէր: Այս անգամ ալ իր հակառա-
կորդներուն բուն յարձակումներուն են-
թարկուելուն բերմամբ, ընտրութենէն օր
մը առաջ, Գիտութեան կաճառին ամպիո-
նէն հետեւեալ կուռ ու վսեմ խօսքերը կը
տեղացնէր ներկաներուն գլխին. «Եթէ
խնդրին տեղեակ էք, ուրեմն ո՞ւր է ձեր
խիղճը, իսկ եթէ անտեղեակ էք՝ ի՞նչ է
սելով կը միջամտէք: Վերջապէս ի՞նչ է
եղածը. սովորական այն միջադէպներէն
մին, որուն առաւել կամ նուազ չափով
ենթարկուած ենք մեր ասպարէզին բերու-
մով, ուրկէ ոչ մէկ գաղութիւն պէտք է
մնայ: Բոլորս ալ նոյն նպատակին կը ձգ-
տինք տարբեր ուղղութիւններով. որ է՝

լուսաբանել պէսպիսի ու բազմաթիւ խոր-
հրդաւոր երեւոյթները: Եթէ դառնու-
թիւններ ալ կուտակուին, թող քամին վա-
նէ զանոնք»:

Վերջապէս 1862-ի վերջաւորութեան,
Փաստէօն 36 ձայնով անգամ կ'ընտրուէր
Գիտութեանց կաճառին: Յաջորդ օրն իսկ,
տիկին Փաստէօն ծաղկեփունջ մը ի ձեռին,
Պիոյի գերեզմանին առջեւ ծնրադրած, իր
ամուսնոյն երախտիքը կը յայտնէր:

Պրոֆ. Պիոյ հոգին յանձնուած էր քա-
նի մը ամիս առաջ՝ 5 փետր. 1862-ին:

Ճիշտ այդ օրերուն, Էֆոլ-Նորմալէն
չըջանաւարտ եղած երիտասարդ մը, յու-
սակար եղած իրեն յանձնուած պաշտօնէն
ու դիքէն, Փաստէօնի կը դիմէր: Փաս-
տէօն հետեւեալ կերպով կը պատասխա-
նէր. «Սիրելի պարոն, շատ կը ցաւիմ որ
չկրցայ ձեզ տեսնել նախ քան ձեր մեկնու-
մը: Բայց ահաւասիկ այն խրատները որ
օգտակար կը նկատեմ ձեզի տալ: Մի՛ ար-
տայայտէք ձեր արդար դժգոհութիւնը:
Առաջին օրէն ջանացէ՛ք ձեր շուրջիներուն
ուշադրութիւնը դրաւել, շնորհիւ ձեր ջան-
քերուն ու ձիւքերուն: Մէկ խօսքով՝ ձեզի
յանձնուած պարտականութիւնը լի ու լի
կատարելով, ծանրաբեռնեցէ՛ք ու չեշտե-
ցէ՛ք դործուած անարդարութիւնը: Այն
յուսակարութիւնը որ կ'արտայայտէք ձեր
վերջին նամակով, գիտնականի մը վայել
է: Մի՛ միայն երկու բան ի նկատի ունե-
ցէ՛ք՝ ձեզի յանձնուած դասերը, ձեր աշա-
կերտներուն յառաջդիմութիւնը ու ձեր
սկսած պրպտումները...: Ձեր պարտա-
կանութիւնը կատարեցէ՛ք լաւագոյն կեր-
պով, առանց մտահոգուելու մնացեալով»:

Փաստէօն այս խորհուրդները տալով
հանդերձ, անձամբ կը ներկայանար նա-
խարարին ու կը բողոքէր դործուած անար-
դարութեան դէմ:

Փաստէօնի խրատներով դօտեպնուած
երիտասարդն ալ իր կարգին կը պատաս-
խանէր. «Այն անսահման յարգանքը որ

կը տածեմ ձեր բոլոր ըսածներուն հան-
դէպ, թանկագին ապաւէն մը կը հանդի-
սանայ ձեր խորհուրդներուն հետեւելու
բարի կամեցողութեանս ի նպաստ»: Ժա-
մանակ մը ետք, գոհացում կը տրուէր
այդ երիտասարդին յայտնած փափաքին
ու դործուած անարդարութիւնը կը դար-
մանուէր:

Արքունիքն ալ հետաքրքրուեցաւ Փաս-
տէօնով, մինչեւ իսկ օր մը պալատ հրա-
ւիրուեցաւ ու իր ըրած գիւտերուն մասին
բացատրութիւններ տուաւ թագաւորին ու
թագուհիին: Այս առիթով հետը մանրա-
դէտ մը տարած ըլլալով, արքայական ըն-
տանիքին եւ ներկաներուն ցոյց կու տար
ալքոլը քացախի վերածող խմորուկը:

Փարիզի 1867-ի ցուցահանդէսին, գի-
նիի մասին ըրած հետազոտութիւններուն
ի զնահատութիւն, չքանչան մը կը ստա-
նար:

Ահա այսպիսի խաղաղ ու բեղմնաւոր
միջնորդութիւն մը մէջ էր որ կ'ընթանար
Փաստէօնի կեանքը, երբ Էֆոլ-Նորմալի
աշակերտութեան մէջ ծագած անկարգու-
թիւնները տակն ու վրայ ըրին վարժա-
րանի վարչական կաղմը: Փաստէօն ալ
մէջն ըլլալով, ամբողջապէս կը փոխուէր
վարչութիւնը: Փաստէօնի կ'առաջարկ-
ուէր Սոսպոնի եւ Էֆոլ-Նորմալի մէջ դա-
սախօսելու պաշտօնը: Այս երկու պարտա-
կանութիւնները միասնաբար յանձն առ-
նելը Փաստէօնի ծանր թուեցաւ, ու մի
նելը Փաստէօնի ծանր թուեցաւ, ու մի
միայն Էֆոլ-Նորմալի դասախօսութիւննե-
րը ստանձնելով, կը յաջողէր կրկին տար-
բալոծարանէն օգտուիլ ու պրպտումները
շարունակել: Փաստէօն նկատի առնելով
ժրանսայի մէջ գտնուող տարբալոծա-
րաններուն խղճալի վիճակը, ուղղակի
րաններուն խղճալի վիճակը, ուղղակի
թագաւորին կը դիմէր, խնդրելով որ գի-
տական փնտռութիւններու համար արդիա-
կան շէնք մը շինուի: Խոստումներ եղան,
դժբախտաբար չիրականացան, ու Փաս-
տէօն, դառնացած, հետեւեալ կերպով

կ'արտայայտէր իր վիշտը կառավարական պաշտօնավարութիւն մէջ. «Ամենախիղարս յղացումներն ու արդարագոյն ակնկալութիւնները չեն կրնար մարմին առնելով կենսունակ դառնալ, մինչեւ որ անոնք մանրակրկիտ զննութեանց ու փորձերու չենթարկուին: Տարրալուծարան՝ եւ նորոյթներու գիւտը, անբաժանելի լրացուցիչներ են: Զննեցէք տարրալուծարանները՝ անմիջապէս բնական զիտութիւնները ամլութեան եւ մահուան գիմագիծը կը ստանան: Անոնք պարզապէս ուսուցման յատկացուած տկար գիտելիքներու կը վերածուին, եւ ոչ թէ յառաջդիմութեան եւ գիտական նուաճումներու:

«Վերադարձուցէք տարրալուծարանները՝ անոնց հետ կենաց աւելը հոսիլ պիտի վերսկսի, իր բեղմնաւորիչ ուժովն ու կորովովը ուռնացած: Առանց տարրալուծարանի, բնագէտն ու տարրաբանը պատեւադմի դաշտին վրայ գէնք չունեցող զօրքերու կը նմանին: Վերոյիշեալ բնաբաններէն բանաձեւութիւնը եղբակացութիւնները ակնյայտնի են: Եթէ հիացումով կը համակուի՞ք՝ հեռադրի, զգայալրկութեան (anesthésie) եւ ուրիշ դմայելիի գիտերուն պարզեւած դարմանալի արդիւնքներով, եթէ նախանձախնդիր էք ձեր երկրին վերադրուելիք բաժինին եւ այդ հրաշալիքներուն տարածման եւ դարդացումին, ձենէ կը խնդրեմ, հետաքրքրուեցէք այն սրբավայրերով որոնք տարրալուծարան կը կոչուին: Պահանջեցէք որ անոնք գեղազարդուին ու բազմապատկուին, որովհետեւ ապագայի հաստատութեանց եւ բարօրութեանց տաճարներն են: Հոն է որ մարդս կը մեծնայ, կ'ուժովնայ ու կը բարեկաւորուի: Հոն է որ բնութեան ստեղծագործութիւններուն ընթերցումին կ'ընտելանայ, բնութեան այդ գաղտնիքները՝ տիեզերական ներդաշնակութեան ու յառաջդիմութեան հրաշալիքները կը կադմեն, մինչ-

դեռ մարդկային ստեղծագործութիւնները՝ ընդհանրապէս վայրագութեան, մոլեռանդութեան ու քանդումի գործիքներ են»:

Փաստէօն այս դմայելիի գաղափարները յայտնելէ ետք կը շարունակէր ահագնալը հնչեցնել, յայտարարելով թէ Գերմանիոյ մէջ միլիոններ կը ծախսուին այդ տաճարներուն ի նպաստ, եւ նոյնն էր պարագան Ռուսիոյ, Անգլիոյ, Ամերիկայի, Աւստրիոյ, Պաւարիայի եւ Իտալիոյ մէջ: Այս իրականութեան լոյսին տակ՝ պահ մը կանդ կ'առնէր մեծանուն գիտնականը՝ սրտնեղած եւ ընկճուած, հարցնելու համար.

— Հա՛պա Ֆրանսան ի՞նչ կ'ընէ...

Գլոտ Պենարի պէս հանճար մը, կը յարէր Փաստէօն, իր կեանքը փճացուց շիրիմի եւ մառանի մը նմանող նկուղի մը մէջ, որուն ճակտին՝ ի լրումն հեղնութեանց՝ հայրենիքի անունն էր քանդակուած, եւ Քոլէժ տը Ֆրանս կը կոչուէր: Փաստէօնի սրտէն փրթած այս հառաչները մինչեւ արքունիքը հասան. թաղաւորը ցնցուելով այդ մերկացումներէն՝ շարժմէր մը ետք Փաստէօնը ունկնդրութեան կը հրաւիրէր բարձրաստիճան անձնաւորութիւններու հետ, ու դրական որոշումներ կը տրուէին մօտակայ ապագային համար: Ժամանակ մը ետքը, կրթական նախարարը՝ 20,000 եւ արքայական տունն ալ 30 հազար Ֆրանք կը յատկացնէին Փաստէօնի երազած գիտութեան տաճարին կառուցմանը համար: Հազիւ թէ շինութիւնը կը սկսէր, ու պատերը կը սկսէին բարձրանալ, վրայ կը հասնէր Փաստէօնի հիւանդութիւնն ու 1870-ի պատերազմը, որոնց հետեւանքով՝ Փաստէօնի մտադրութիւններն ու իդէերը օդը կը ցնդէին:

Բժշ. Պ. ՄԻՍԱԲԵԱՆ

(Շարունակելի)

ԳՐԱՖԻՄԷԻ ԳԵՐԵՋՄԱՆՆՈՅԸ

Եթէ երբեք դուք եւս անցնիք կամրջակէն հանդիպակաց, եւ ձեր քայլերն ըղձաք ուղղել մարդագետնէն դէպի բլրակ, Հոն կը գտնէք քարեր անտաշ եւ նոճիներ ուղղահայեաց, Որոնց խոհերն հովերն անվերջ կը փայլայեն երգով մ'յստակ:

Նոճիաճահ խաղաղութիւնն հոն իր տընակն ունի լըռին, Հոն կեանքն երբեք իր քայլերուն չէ թողած հետքն անջնջելի, Ու հոն երբեք չեկան մարդիկ խնդութիւնն երբ խորախճանքին՝ Ունէր ոսկի կայծեր հըրուտ սրտին դարկին մէջ գարունի:

Շիրմաքարերն, ամփոփ եւ լուռ, նըման խոցուած սրտի մը լայն, Իրենց ցաւին մէջ խորամուխ կը մոռնան օրն աստուածալիս, Ո'չինչ կ'ըղձան ծագող ալգէն, բայց կը տենչան որ իրիկուան Շողայ արեւն իրենց անձայն առանձնութեան վրայ խաղաղ:

Ու օրն այսպէս կը մահանայ գիւղին կանաչ թեւերուն տակ, Ինչպէս այտին վըրայ դալուկ արցունքն անբախտ հարազատին. Լըռութեան մէջ անուշտ նոճին եղերերդէ՛ իր տրամուռակ Ո'ղբն հեղաշունչ, եւ մեռեալներն հըճուին լուսնին տակ թախճաղին:

Անոնք, աւա՛ղ, պիտի չըղձան որ պահն հատնի՛ մեծ գիշերին, Հիւժի խաւարն անդնդախոր եւ ծագի լոյսն օրուան չըքեղ, Զի խաչն հեշտի՛ն է առաւել եւ շիրմաքարն աներկրային, Երբ մենութեան դէմ կը բանայ գիշերն հսկայ թեւերն ահեղ:

Պիտ' չըխօսին անոնք երբեք այցելուի՛ն հետ գիշերուան, Լուկ իրենց մահն իրենց վերեւ ճշմարտութեան խօսքն է անահ, Անոնք գիտեն որ փառք ու սէր կ'անցնին մարդուն կեանքին նըման, Թէ շիրմն է որ լուկ կ'ապրի երկրագունտի ցաւին վըրայ:

Ու միշտ այսպէս պիտի մընայ մեռեալն՝ անխօս իր շիրմին դէջ, Պիտի անցնին կեանք եւ հըճուանք, մինչ մոռացօնքն անծայրածիր՝ Մեծդի թեւերն իր արոյրէ սփռէ անհուն պարապին մէջ, Ուր գեղերին ունայնութեան ողններու հոյլեր պատիր:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ